

2632

2633

2634

244

---

5-36

2010




\* B 2001

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ս. ԶԳԱՅԻՆ

ՄԱՅԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ՀԱՍՏԱՏԵԼ 9 ՄԱՐՏ 1877



Կ. ՊՈԼԻՍ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1877

28118-62

43937 - U. 4.



28148 - 69

~~37~~

~~100~~

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ ՀԱՅՈՑ

Handwritten text at the top of the page, possibly a title or header, which is mostly illegible due to fading.

Handwritten text below the title, also mostly illegible.

Handwritten text in the middle section, consisting of several lines of cursive script. A large, dark purple ink blot obscures a portion of the text in the upper right of this section.

Handwritten text in the lower section, consisting of several lines of cursive script. A dark purple ink blot is visible on the left side of this section.



# ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

## ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ

Հ Ա Յ Ո Յ

Հաստատուող 9 ճևարս 1877

### ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ընկերութեանս հազատակն է աղ-  
դային մատենադարանն ու թանգարանը  
ճոխացունել, բանասիրական և հնադի-  
տական հետազոտութիւններ ընել, և  
հրատարակել ի տեղեկութիւն :

2. Ընկերութեանս անդամ կրնայ դրը-  
ուիլ ամենայն ոք ընկերի մը առաջար-  
կութեամբ և Տնօրէն ժողովոյ հաւա-  
նութեամբ :

3. Ընկերութեանս անդամ եղողը պի-  
տի վճարէ տարեկան քանոտսուն և չորս  
դահեկան :

4. Եթէ մէկը մի անդամով վճարէ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

տասը տարուան բաժանորդագիւնը , որ կընէ չորս հարիւր քառասուն դահեկան , ցկեանս անդամ կ'արձանագրուի :

5. Ընկերաց վճարած գրամներն առ Ազգն եղած նուիրատուութեանց կարգէն են , ոչ ոք բան մը յետս պահանջելու իրաւունք ունի :

6. Ընկերութեանս կանոնաւոր եկամուտները հետեւեալ կերպով պիտի գործածուին .

Ա. Մէկ մասը՝ առ նուազն հարիւրին տասն լինելով , գրամագլխի պիտի յատկանայ :

Բ. Մէկ մասը՝ հարիւրին յիսունէն վար չլինելով , մատենագարանին և թանգարանին բարդաւաճմանը պիտի գործածուի :

Գ. Եւ մնացած մասը՝ ըստ որոշման Տնօրէն ժողովոյ , վարչական ծախուց և հրատարակութեանց պիտի գործածուի , Ընկերութեանս պիտոյիցն համեմատ :

Դ. Ընկերութեանս գրամագլխի յատկանալիք գումարը ( յօդ. 6. Ա. ) բնաւ չպի-

տի վատնուի, այլ հաստատուն եկամուտ  
բերող կալուած պիտի առնուի անով:  
Բայց մինչև որ բաւական գումար մի  
գոյանայ, հետզհետէ ժողոված դրամ-  
ներն ապահով դրամատան մի պիտի  
յանձնուի ի շահեցումն՝ ըստ որոշման  
Տնօրէն ժողովոյն :

Տ. Ընկերութեանս կալուածները յա-  
նուն Ազգին կդառնան, Ազգային Ու-  
սումնական Խորհրդոյ ցոյց տուած ե-  
ղանակաւը. բայց պէտք է ամեն ան-  
դամուն Ազգային Պատրիարքարանէն՝  
կալուածոյն ընկերութեանս վերաբերելը  
հաստատող վաւերագիր մը առնուի, որ  
կալուածագրին հետ մէկտեղ միշտ Ըն-  
կերութեանս Տնօրէն ժողովին քով պի-  
տի մնայ :

Ծ. Ազգային Մատենադարանի և Թան-  
գարանի վերաբերեալ իրերը որևէ պատ-  
ճառաւ դուրս չեն կրնար ելնել, Բայց  
այն տեսակ գիրքեր՝ և այլն՝ որք միևնոյնն  
լինելով երկու օրինակէն աւելի կդըտ-  
նուին, կամ այն տեսակ իրերն՝ որք ազ-

դային Մատենադարանի կամ Թանգարանի նպատակին չեն համապատասխաներ, Տնօրէն ժողովն կրնայ զանոնք ազդին օգտակար եղանակաւ մի գործածել:

**10.** Ընկերութեանս գործերն իւր Ընդհանուր ժողովոյն կողմանէ ընտրեալ Տնօրէն ժողովոյ մի ձեռօք կանօրինուին, որ կրողկանայ հինգ անդամներէ որք են, Ստենապետ, Ստենագիր, Վերատեսուչ, Գանձապետ և Գորդիր, որոց պաշտօնը հնգամեայ է, և վերընտրելի են: (\*)

**11.** Երբ Տնօրէն ժողովոյ գործոցը վերայ հսկող քսան և մէկ անդամ չի գտնուի, Ընկերութիւնս լուծուած կը համարուի, և ստացուածքը Ազգին կը

---

(\*) Հիմնադիր-Տնօրէն ժողովն՝ որու պաշտօնն է ազգային Մատենադարանն ու Թանգարանը կազմակերպել և անոնց բարգաւաճմանը սահմանեալ Ընկերութիւնս հաստատել, պիտի կազմէ առաջին շրջանի Տնօրէն ժողովն, որպէս զի Ընկերութիւնն իւր վախճանին ծառայեցունելու կարողանայ:

պատկանի Աղգային Երեսփոխանական  
Ժողովոյ որոշմանը ենթարկուելով :

**12.** Երբ Տնօրէն Ժողովն Ընկերու-  
թեանս սոյն տասներկու հիմնական կա-  
նոնաց լերայ բարեփոխութիւն մի ընելու  
հարկ տեսանէ, պէտք է Ընկերութեանս  
Ընդհանուր Ժողովոյ հաճութիւնն առ-  
նու, և միանգամայն Աղգային Ուսում-  
նական խորհրդոյ հաւանութիւնն ստա-  
նայ, որ միշտ իրաւունք ունի օրինաց  
ճիշդ գործադրութիւնը պահանջելու :



### ՄԱՍՆԱԻՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

**13.** Ընկերութեանս անդամակցու-  
թեան տուրքը՝ (ամեն եռամիս տասն և  
մէկ դահեկան) պէտք է կանխիկ լծար-  
ուել :

**14.** Երկու եռամսեայ չլծարողն Ըն-  
կերութենէս հրաժարուած կհամարուի :

**15.** Անդամակցութեան տուրքէն  
դուրս կամ աւելի առնուած դումար մի՛  
իբրև նուէր կարձանագրուի :

**16.** Անդամք իրաւունք չունին յետս պահանջելոյ եւ ոչ մի ինչ: Իսկ եթէ մէկը մասնաւոր պայմանաւ կամ նպատակաւ ընկերութեանս բան մի յանձնած է, իրաւունք կունենայ անոր դործադրութիւնը պահանջելոյ:


**17.** Տնօրէն ժողովոյ անդամոց ամեն մէկը իւր վարելիք պաշտօնին համար կընտրուի: Իւրաքանչիւր պաշտօնեայ իւր դործոցը պատասխանատու է, և ամենը մէկանց համարատու ընդհանուր ժողովոյ:

**18.** Տնօրէն ժողովոյ ամեն պաշտօնեայ պարտաւոր է իւր ընելիք դործողութիւնները ժողովքի օրէն յառաջ արձանագրել տալ առ ի գիտողութիւն ընկերակցացը և յաջորդ նիստի օրէն յետոյ դործադրել:

**19.** Ժողովքի օրը եթէ Տնօրէն ժողովոյ մեծագոյն մասը խնդրոյ մի դէմ լինի, չգործադրուիր:

**20.** Տնօրէն ժողովոյ հինգ անդամոց պարտականութիւններն են հետևեալքն.

Ա. ԱՏԵՆԱՊԵՏԻՆՔ. Ընկերութեանս Տնօ-



րէն և Ընդհանուր Ժողովները հաւաքել  
և նախագահել. Ընկերութիւնս ներկա-  
յացունող գրութիւններն ստորագրել.  
գրական և ուսումնական ատենախօսու-  
թիւններն հաստատել, Ընկերութեանս  
պատուոյ անդամ ընտրուելոյ արժանիք  
ունեցողները Տնօրէն Ժողովոյ ներկայա-  
ցունել, ընկերաց անդամակցութիւնը  
վաւերացունել :

Բ. ԱՏԵՆԱԴՊՐԻՆԸ. Ընկերութեանս բո-  
լոր գրութիւններն ընել կամ ընել տալ  
իւր հսկողութեամբը :

Գ. ՎԵՐԱՏԵՍՁԻՆԸ. Մատենագարանի և  
Թանգարանի հսկողութիւնը և անոնց  
պիտոյից որոշումը :

Դ. ԳԱՆՁԱՊԵՏԻՆԸ. Ընկերութեանս  
գրամական գործողութիւններն և հա-  
ւաքուած գրամներուն բաշխումը կատա-  
րել ըստ 6<sup>րդ</sup> յօդուածի, և տարեկան հաշ-  
ուեկշիռն ու հաշուեցոյցը պատրաստել :

Ե. ԳՈՐԾԱԴՐԻՆԸ. Վարչական բարեկար-  
գութիւններն, գրական և հնագիտա-  
կան պիտոյից մատակարարութիւնը՝ ըստ

առաջարկութեան վերաանշին, և ընկեր-  
ութեանս օգտին վերաբերեալ ամեն  
ձեռնակութեանց անօրինութիւնը :

**21.** Բայ ի Դեր—Ստենապետէն որ  
Ընդհանուր ժողովէն կրնարուի և պաշ-  
տօն կվարէ՝ միայն ի բացակայութեան  
ատենապետի, Տնօրէն ժողովոյ միւս ան-  
դամներն կարող են իրենց մէկմէկ օգ-  
նական առնելու իրենց պատասխանա-  
տուութեանը ներքե :

**22.** Ընկերութեանս պաշտօնակալը  
Ընդհանուր ժողովոյ անդամներէն կլինին :

**23.** Պաշտօնէի մի հրաժարումը կամ  
երկար բացակայութիւնը տեղի ունե-  
ցած ատեն, Տնօրէն ժողովոյ մնացեալ  
անդամները ի հարկին կրնան առժամա-  
նակեայ անդամ մի որոշել մինչ ի դու-  
մարումն Ընդհանուր ժողովոյ :

**24.** Ընկերութիւնս կներկայանայ Ընդ-  
հանուր ժողովովը, որ կբաղկանայ (բայ  
ի առաջին տարուրնէ) ըստը այն ան-  
դամներէն՝ որք մի տարի անդամակից  
եղած և գէթ երկու անգամ ալ իրենց



միջնորդութեամբը զրել առած են :

**25.** Ընդհանուր ժողով կգումարի Նախ կանոնաւորապէս՝ ամեն տարի մարտ Ծին, կամ յաջորդ կիրակի օրը Տնօրէն ժողովոյ համարատուութեանցը և առաջարկութեանցը համար. Երկրորդ արտաքոյ կարգի՝ երբ Ատենապետը, Տնօրէն ժողովը կամ ՁԱ անդամք պահանջեն մի մասնաւոր խնդրոյ համար :

**26.** Ընդհանուր ժողովը օրինաւոր կը համարուի ՁԱ անդամոց ներկայութեամբ. որոշմունքներն կլինին ձայնից առաքելութեամբ :

**27.** Ընդհանուր ժողովոյ գումարման հրաւերները պէտք է գոնէ 8 օր առաջ խնդրոյ կարգաւ ծանուցուի լրագրէն միջոցաւ :

**Հիմնադիր Ժողով**

Ազգային Մասենադարանի և Թանգարանի

- |                                 |          |
|---------------------------------|----------|
| ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ ՊԷՅ.     | Արեւապետ |
| Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԻՒՆՔԵԱՐՊԷՅԷՆՏԵԱՆ. | Վերապետ  |
| ԲԱՐՍԵՂ ՀԱՂԱՃԵԱՆ.                | Գանձապետ |
| Յ. ԱՐՇԱԿ.                       | Գործադիր |

32

~~2477~~

5018 1/5 1/5

11445

1545

2470

~~2470~~

24701



